

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1954 ՄԱՐՏ - ԱՊՐԵԼ Թ. 3 - 4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	Էջ
ՃԱՆԱՇՆԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. — Ապրիլեան ձայնը	49
ՊԱՏՄԱԿԱՆ	
ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ. — Նորակերտ հայ Լուսինեաններ (շարք)	53
ՖՈԿԼՈՐԱՆ Հ. ԱՆԴՐԵԱՍ. — Ապերի Կոմսի զարմանալի կեանքը (շարք)	58
ՄԻՍԱԲԵԱՆ ԲԺ. Պ. — Լուի Փաստէօն (շարք)	82
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ ՏՐԻԷՍՍԵՆ. — Ս. Բարսեղի հայ ձեռագիրներու հաւաքածոն (շարք) (Թրքմ. Հ. Բ. Վ. Չրաքեան)	65
ԲԻԻՐՏԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ. — Թաղէս Վ. Կոզանիացի, Թաթաթեցի և Թաղէս Երէյ Սերաստացի տաղասացներ	70
ՀՆԱԽՈՍԱԿԱՆ	
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՄԻՔԱՅԷԼ. — Հայտատանի բերդերը (շարք)	88
ԳՐԱԿԱՆ	
ՍՐԱՊԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. — Վարդանանք	52
ՃԱՆԱՇՆԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. — Բազմակամ. Ա. — Մարտերը	78
Բ. — Երգ խաղաղութեան	80
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ	
ՃԱՆԱՇՆԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. — Բանաստեղծ Արամայիս Սրապեանի «Ազոլոյէն վեհե-տիկ»ը	92
ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ	
Փ. Հ. Ե. — Մուրա-Ռաֆայէլեան նախկին տաներու Միութեան վերաբերեալ	87
ԱԿԱՆԱՏԵԱՍ. — Միլոնի Հայ տունը	96

SOMMAIRE

1954 Mars - Avril N. 3 - 4

ARTICLE DE FOND	PAGE
Djanachian P. M. - Voix d'Avril	49
HISTOIRE	
Hatsouni P. Vardan. - Histoire des nouveaux Lusignans (suite)	53
Fogolyan P. André. - La vie étonnante du Comte Abédik (trad. de l'hongrois) (suite)	58
Missakian Dr. B. - Louis Pasteur (1822-1895) L'homme (suite)	82
PHILOLOGIE	
Innoc. W. Driessen. O. P. - Les recueils des manuscrits arméniens de St. Basile (trad. en arm. par le Rév. P. Chérubin Tcherakian)	65
Kurdian Haroutioun. - Thaddée Vrt. de Colonia, de Thokath et le prêtre Thaddée de Sébaste les chansonniers	70
ARCHEOLOGIE	
Hovhannessian P. Michel. - Les forteresses de l'Arménie (suite)	88
LITTERATURE	
Serabian Aramaïs. - Les Vartananks	52
Djanachian P. M. - Martial I. Chant de guerre	78
II. Chant de paix	80
RECENSIONS	
Djanachian P. Mesrob. - Le recueil de poésies: «D'Asolo à Venise» du poète Aramaïs Serabian	92
ECHO ARMENIEN	
P. P. E. - Au sujet de l'Union des anciens élèves du Collège Moorat-Raphaël	87
Présent. - «La maison arménienne» de Milan	96

ԲԱՉՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1954

ՀԺԲ. ՏԱՐԻ



ՄԱՐՏ - ԱՊՐԵԼ

ԹԻՒ 3-4

ԱՊՐԻԼԵԱՆ ԶԱՅՆԵՐ

Գարնան՝ երբ բնութիւնը կը սկսի ծաղկիլ ու ժպտիլ, կը վերսկսի նաեւ կեանքը, իր բազմադիմի զանազանութեամբ ձեւերու եւ գոյներու: Կեանք մը համակ երգ, զուարթութիւն ու խայտառակ: Բայց կեանքի այս վերազարթումին մէջ ու մանաւանդ գարնանային զմայլելի զուարթութեան մէջ կարծես նախադրականօրէն կը ցցուի մեր ահաւոր եղեռնին անցեալ ուրուականը, մեր ապրիլեան հարիւր հազարաւոր գոհերու յիշատակը կու գայ հակադրեցութեամբ մը ցնցելու մեր հոգիները: Գարնան կենսամորոգ եղանակին՝ կեանքին խորտակուածները, արիւնի գետահոսումներով գալարուածներու պատկերները կ'արձանան մեր մտքերուն առջեւ ու անապատներու անվերջանալի կարանային գնացքներու ընդմէջէն կը տեսնենք ազգ մը գրեթէ ամբողջովին նետ-

ուած նահատակութեան անձայր ուղիներուն վրայ:

Այս ծանրաբախիժ յիշատակը, արդարեւ, ամէն գարնան կը նորոգուի մեր հոգիներէն ներս. որովհետեւ չափազանց քաբմ է անոնց քողած հետքը, զոր քառասուն տարիները կարող չեն եղած մոռցնել գայն: Ո՛չ միայն քառասուն տարիներ, այլ նաեւ երկար դարեր պիտի ապրին անոնք, պիտի մոնչեն իրենց երգերուն դիւցազնային շունչին ու կանչին մէջ, պիտի մրմնջեն աղանիներու պէս իրենց քրիստոնէական ներդաժնութեան ոգիով, եւ պիտի ներշնչեն մեզ անվերջ:

Յաւին յիշատակը, սակայն, պէտք չէ ներգործէ միայն լուսնի ու քաղցի ազդեցութիւն: Այդ յիշատակը կենսունակութեան ազդակ մը ըլլալու է. նահատակներու արիւնը մեր անման, մեր գործադ-

ման ու մեր պայքարին աղբիւրն ըլլալու է:

Սփիւռքը կը մտատանջէ մեզ: Անժըյստելի է այս մղձաւանջին ահաւորութիւնը: Մեծ Աղէտէն ձերբազատուածներն են որ մեծ մասով կազմած են, այո՛, այդ Սփիւռքը: Անոնք իրաւունք ունէին ազատ երկնքի մը հեւ ի հեւ որոնումին մէջ: Գրտան, տեղաւորութեան, կազմակերպութեան, ամփոփեցին իրենց սպառած ոյժերը, սկսան գործել, արտադրել օտարին երկրին մէջ եւ նաեւ օտարին համար: Ու ատիկա եղաւ ներմակ ջարդը, ոչ նուազ աղետալի քան կարմիր ջարդը:

Մեր նախորդ խմբագրականով քելադրած էինք ձեռք առնուելիք կարգ մը միջոցներ, գուցէ արդէն առարկայ շատերուն ամէնօրեայ խորհրդածութիւններուն, պարզապէս գործնական հետեւանկներու յանգելու համար մեր անբացատրելի ազդեղ ոգեկոչելու ատեննիս: Ողբերգական ու լալկան գրականութիւն մը, ցաւին ահռելի ընկճումին տակ սահմուկած ու շրջափռած հրապարակագրական անդրադարձումները ապարդիւն են գրեթէ, եթէ անոնց չընկերանան նաեւ լուծումներ, իրականութիւններու մատնանշումներ:

Գործելու շրջանն է անտեղիտալի կամփի մը վնասականութեամբ:

Այն բոլոր ճիգերը, որ կու գան ու կը միանան հաւաքական չափերու տակ առնելու մեր ծրագիրները, մեր նիւթական ու բարոյական եւ հոգեկան կորովը, անմիջական ձեռով կարենցնելու ներմակ ջարդին կատարելիք ահաւորագոյն վնասը, կրնան գուցէ գոհացում տալ մեր հոգիներուն, եւ դարմանել մեծ եղբայրները:

Բուն հայուն նախադասը փոքրեկող հարուածները: Այն ժամանակ միայն մենք պիտի կարենանք արդարաւապ պատմութեան առջեւ, երբոր եւրոպական կամ ընդհանուր օտար ազգերու մէջ ապրող հայ գանգուածէն՝ հանեմք ազգին համար անհրաժեշտօրէն օգտակար ոյժեր, օտար միջավայրը գործածելով ի նպաստ ազգային դատին եւ այդ օտար միջավայրին մէջ նաեւ պայքարելով ուժացումի բոլոր հրապոյրներուն դէմ:

Մէն մի հայու հոգւոյն մէջ կենդանի է յիշատակը ապրիլեան նահատակներուն: Որովհետեւ չկայ ընտանիք մը առանց գոհի, չկայ անհատ մը առանց տխուր դրուագի մը: Բայց միանգամայն այդ մէն մի հայը ունենալու է նախանձախնդրութիւնը իր ազգին պատմութեան ծառայելու, բերելով իր մասնակցութիւնը այն ընդհանուր պայքարին, որուն թշնամին այս անգամ մեզի աւելի մօտ է, ինչպէս ըսինք՝ նոյնիսկ մեր մէջն է, յարատեւ ըստանացող: Օտար քաղաքակրթութեան, լեզուին եւ կեանքին շարքն ու դիւքանքը, մոգութիւնը, որով յաճախ միամիտ հայեր, չըսելու համար անգիտակից մտայնութիւններ, տարապայմանօրէն կը տարուին: Վերջին քառասունամեակին տեղի ունեցած մեր կորուստներուն իրականութիւնը անժխտելի է արդարեւ, կորուստներ երբեմն անգգալի, երբեմն չափազանց յայտնի եւ ընդվզեցուցիչ:

Միութիւններ, հաւաքական կազմակերպութիւններ կը կատարեն իրենց վիճակուած պարտականութիւնները: Կը բաւէ որ ամէն անհատ, նկատած իւրաքանչիւր ինքնիւր մէջ, աւելի եւս խորանայ

իր ներհայեցողութեան մէջ, կշռէ ու համեմատէ իր ոյժերը, իր միջոցները եւ իր կատարած ազգօգուտ դերին չափը, եւ իրմէ՝ պահանջուած կարելիութիւնները: Երբ ամէն անհատ իր կոչման բարձրութեան մէջ է, Սփիւռքը չունի երկիւղը կորուստի, բնաջնջումի ի վնաս մեր ընդհանուր ազգային շահերուն եւ գոյամարտին:

Ապրիլեան նահատակները գոհեր էին իրենց Ս. Նախնեաց հաւատքին հաւատարմութեան: Այդ վտանգը այսօր չի սպառնար Սփիւռքի ոչ մէկ հատուածներուն մէջ:

Մեր վտանգը, մեր թշնամին այսօր կը հարուածէ մեր լեզուին մէջ, մեր Մշակոյթին մէջ: Մեր գործածելիք գէնքն ալ հետեւողաբար պիտի ըլլայ փարումը մեր լեզուին, մեր մշակոյթին: Հոս է ահաւասիկ փրկութեան նամբան:

* * *

Ապրիլ ամիսը ամէն տարի կը նորոգէ նաեւ անմահ յիշատակը երանաշնորհ Մըլիքար Աբբահօր:

Ընդունայն տեղ տրուած չէ Միլիքարի «Լուսանորոգ» տխուրը: Այն որ գրատուներու փռչիւնն է լոյս աշխարհ բերաւ ազգային լեզուի գանձերը, իր «Հայկազեան Բառարան»ով, այն որ աշխարհաբարի եւ գրաբարի քերականութիւններ գրեց, այն որ կերտեց ազգային գրականութեան, ազգային աւանդութիւններու առողջ պահպանման համար մշակոյթի վառարան մը Ս. Ղազարի կղզեակին մէջ, էր եւ կը մնայ մեր արդի հայ գրականութեան մէջ մշակոյթի ամէնէն գորաւոր եւ արդիւնաշատ առաքեալը:

Կոյքի ամէնէն գորաւոր եւ արդիւնաշատ առաքեալը:

Միլիքար ոչնչէն, կարելի է ըսել, ըստեղծեց իր գործը: Այսօր ազգը ունի բառարաններ, ունի քերականութիւններ, ունի գրատուներ, ունի բազմազան միջոցներ ամուր հիմքերու վրայ պահելու համար իր մշակութային գորութիւնը: Այո՛, Մըլիքար չունէր Սփիւռքի մը պատմաւած մտահոգութիւնները. իր օրերուն կար միայն Պոլիսը, կէս մը հայկական միջավայր, իսկ մնացեալ մասը հայկական գաւառներու ծոցը ցրուած, բէտ պարուրուած քանձր խաւարի ու տղիւտութեան մէջ:

Մեր առջեւ կը ծանրանայ իր բովանդակ իրականութեամբը և դժուարութիւններով այն մեծ պայքարը, որ պէտք է ըլլայ նաեւ ամէն հայ անհատի մասնական պայքարը, կործմ տալու օտար ազդեցութիւններու, օտար քաղաքակրթութեան հրապոյրին, մնալու համար հարազատ հայեր մեր ընտանիքներէն ներս, եւ հարազատ հայեր մեր զգացումներուն մէջ ի պաշտպանութիւն մեր ազգային իրաւունքներուն, մեր արժէքներուն, կառչած անոնց նոյնիսկ տեսակ մը ազգային հպարտութեամբ:

Երբ տոհմային այս ինքնագիտակցութիւնը գործէ մէն մի հայու մէջ, Ապրիլեան Նահատակները պիտի գտնեն իրենց վերապրած գաւակներուն եւ սերունդին մէջ՝ նշմարիտ եւ գործնական հաւատարմութիւնը հայրենիքի գաղափարին անկեղծ փարումին:

Հ. Մ. Ճ.

